ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը օգոստոսի 2017թ
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ Ավիացիայի վարչության ԱՏՈՒ և ավիացիոն սպառազինության բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Համբարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, ԿԱՊ-ի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության նորմատիվ իրավական ապահովման բաժնի առաջատար մասնագետ, քիծ 3-րդ դասի խորհրդական Ն. Արշակյանը,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, կապիտան Հ. Բարսեղյանը:
Գնումները համակարգող՝
Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյանին

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.
2.**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին
4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Հատուկ սարքերի և գործիքների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	«Մարինե-90» ՍՊԸ
2.	«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ
3.	«Լեմուր» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հրավերով /հարցումով/ սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի հայտի. վերջինիս ներկայացրած գնային առաջարկի «Արժեքը» դաշտում առաջարկվող գինը ներկայացված է միայն թվերով, տառերով արտահայտված չէ, ինչը չի համապատասխանում հրավերով դրա համար

նախատեսված լրացման կարգին: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Անվանում	Չ/Մ	Քանակ	Ընդհանուր գումար /դրամ/ նախ. գին	«Մարինե-90» ՍՊԸ		«Լեմուր» ՍՊԸ		1-ին տեղ /հայտող/ զբաղեցնող մասնակից
					ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ով	առանց ԱԱՀ-ի	
1.	Մի-8 ուղղաթիռի քարշակման սարք	հատ	1	1,000,000					Առաջարկի բացակայություն
2.	Մի-24 ուղղաթիռի քարշակման սարք	հատ	1	1,000,000					Առաջարկի բացակայություն
3.	Գործիքների հավաքածու մետաղյա արկղով	հատ	1	1,500,000	1,950,000	1,950,000			Ոչ շահավետ առաջարկ
4.	Ձեռքի հիդրավլիկ մամլիչ	հատ	1	380,000	720,000	720,000	680	680	«Լեմուր» ՍՊԸ
5.	Մոնտաժային սղոց	հատ	1	120,000	230,000	230,000	280	280	«Լեմուր» ՍՊԸ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «Լեմուր» ՍՊԸ-ի գնային առաջարկում թվերով և տառերով նշված գումարները չէին համապատասխանում միմյանց՝ գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ընթացակարգի հրավերի 8.1 կետով հիմք ընդունեց տառերով գրված գումարը

3.3 Քանի որ են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով «Մարինե-90» ՍՊԸ-ի առաջարկած գինը գերազանցում էր պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով **11.08.2017թ.** ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) նշանակվեցին բանակցություններ: Բանակցությանը ներկայացավ միայն «Մարինե-90» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, որը 3-րդ չափաբաժնի մասով առաջարկած 1,950,000 ՀՀ դրամը նվազեցրեց 1,900,000 դրամի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազեցրած գինը ևս գերազանցում էր ապրանքի նախահաշվային արժեքը՝ հանձնաժողովը որոշեց տվյալ չափաբաժնի մասով մերժել «Մարինե-90» ՍՊԸ-ի հայտը:

3.4 Ըստ ներկայացված տվյալներ «Մարինե-90» և «Լեմուր» ՍՊԸ-ները ԱԱՀ վճարող չեն:

3.5 Հանձնաժողովը որոշե՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը(հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի 1-ին զբաղեցրած մասնակցի որոշման մասին.

4.1 **24.08.2017թ. էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 4-րդ և 5-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Լեմուր» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի, 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-23/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Հանձնաժողովի նախագահ	Հ. Կարապետյան
Գնահատող՝	Ա. Համբարյան
Գնահատող՝	Ռ. Զադոյան
Գնահատող՝	Հ. Բարսեղյան
Գնահատող՝	Ն. Արշակյան
Գնումները համակարգող՝	Ա. Մաղաքյան